

ԱՆՑՅԱԼԻ ԼՈՒՍԱՎՈՐ ԷՋԵՐԻՑ

ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հարուստ ու հետաքրքրական է Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի տառապալից կյանքն ու բազմաբնույթ գործունեությունը:

Երջանկահիշատակ Խորեն Ա Ամենայն Հայոց նահատակ Հայրապետը (Աղեքսանդր Մուրադբեկյանը)[1] ծնվել է 1873 թ. դեկտեմբերի 8-ին[2], ազգային ու մշակութային հարուստ ավանդություններ ունեցող հայաշատ Թիֆլիսում, միջին դասակարգի ընտանիքում[3]: 1883 թ. պատանի Աղեքսանդրը եկեղեցական կամ ծխական դպրոցի ուսուցիչ դառնալու մտադրությամբ ընդունվում է Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոց[4], որտեղ, ըստ 1861 թ. սեպտեմբերի 1-ի Մատթեոս Ա Կաթողիկոսի 466 թվակիր կոնդակի, պատրաստվում էին բարեկիրթ և արժանավոր հոգևորականներ հայ եկեղեցիների և նվիրյալ ուսուցիչներ ծխական դպրոցների համար[5]: Ազգաշեն այս հաստատության մեջ է Աղեքսանդրի հոգում սեր ճառագում դեպի ազգն ու եկեղեցին: Ապագա եկեղեցականն այստեղ ուսանում է կրոնագիտություն, պատմագիտություն, լեզվաբանություն, աշխարհագրություն, բնական գիտություններից՝ թվաբանություն, հանրահաշիվ, երկրաչափություն, ֆիզիկա, ինչպես նաև հոգեբանություն, տրամաբանություն, երգ-երաժշտություն, ռուսաց և ֆրանսերեն լեզուներ[6]: Աշակերտելով անվանի մանկավարժներ Ստ. Մալխասյանին, Մ. Եկմալյանին, Պ. Պոռշյանին, նա խորամուխ է լինում գիտության անդաստանի մեջ՝ ընդմիշտ կապված մնալով ազգային մտավոր կյանքին: 1892 թ. Աղեքսանդրը հաջողությամբ ավարտում է Ներսիսյան հոգևոր դպրոցի լրիվ դասընթացը[7]:

---

[1] Հայաստանի Հանրապետության Պատմության Կենտրոնական Պետական Արխիվ (ՀՀՊԿՊԱ), Կաթողիկոսական Դիվան, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1675, թերթ 1:

[2] Ներսիսյան հայոց ազգային հոգևոր դպրոց, ֆ. 2, ց. 1, գ. 1019, թ. 13:

[3] Ֆ. 57, ց. 2, գ. 378, թ. 1, թարգմանություն ռուսերենից:

[4] Ֆ. 2, ց. 1, գ. 1037, թ. 155:

[5] **Ստ. Մալխասեան,** Համառօտ պատմութիւն Ներսիսեան Հոգևոր Դպրոցի Եօթանասուն հինգամեայ գոյութեան, 1900 թ., Թիֆլիս, էջ 107:

[6] Նույն տեղը, էջ 178:

[7] Ֆ. 2, ց. 1, գ. 1203. թ, 37:

1897 թ. հոկտեմբերի 8-ին Մկրտիչ Ա Կաթողիկոսի կոնդակով Աղեքսանդրը նշանակվում է Ներսիսյան դպրոցում իբրև երգի ուսուցիչ[8]: Չորս տարի շարունակ, մինչև 1901 թ. հունիսի 4-ը, անմնացորդ նվիրումով հոգու իր պարտքը կատարելով հարազատ կրթօջախի հանդեպ: Թե ինչով է նա զբաղվել Ներսիսյան դպրոցը ավարտելուց հետո 1892 թ.-ից մինչև 1897 թ., որևէ հավաստի տեղեկություն չունենք, այդ մասին գրված չէ նաև իր ինքնագիր ինքնակենսագրականում[9]: Սակայն որոշ վկայություններ կան, որ նա սովորել է Մոսկվայի համալսարանում և, իբրև ազատ ունկնդիր, հետևել գերմանական համալսարանների դասախոսություններին[10]: Համաձայն մեկ այլ աղբյուրի, նա, իբրև ազատ ունկնդիր, հետևել է շվեցարական համալսարանների դասախոսություններին և ապա ուսուցչություն արել Թիֆլիսի շրջանի գավառներում[11]:

Այսպիսով, պետք է ընդունել, որ նա կարճ ժամանակներով սովորել է վերոհիշյալ համալսարաններում՝ առանց, սակայն, ավարտելու դրանց լրիվ դասընթացները: Այն, որ Ա. Մուրադբեկյանը ռուս կամ եվրոպական որևէ համալսարանի լրիվ դասընթացը չի ավարտել, հաստատում է նաև «Ներսիսյան դպրոցի պատմություն» գրքի հեղինակը: Նա գրքի մեջ զետեղել է մի ցուցակ, ուր մինչև 1900 թ. դրությամբ ցույց է տրվում, թե Ներսիսյան դպրոցի ո՛ր ուսուցիչը ի՛նչ կրթական հաստատություն է ավարել: Այս ցուցակում ապագա Կաթողիկոսի անվան դիմաց գրված է միայն Ներսիսյան դպրոցի անունը[12]: Արդեն 1900 թ. հետո նա որևէ տեղ չէր կարող սովորել, որովհետև մինչև իր հոգևորական ձեռնադրվելու համար Էջմիածին գնալը (1901 թ. հունիսի 19-ը) եղել է Ներսիսյան դպրոցի ուսուցիչ[13]: Աղեքսանդր Մուրադբեկյանը 1901 թ. հունիսի 19-ին, համաձայն իր խնդրանք-դիմումի, ազատվում է Ներսիսյան դպրոցի երգի ուսուցչի պաշտոնից և անդամագրվում Էջմիածնի միաբանության շարքերը[14]: Նույն թվականի սեպտեմբերի 25-ին ձեռնադրվում է սարկավագ, իսկ դեկտեմբերի 17-ին Աղեքսանդր սարկավագը Սևանի մենաստանի Ս. Աստվածածին եկեղեցում ձեռնադրվում է աբեղա՝ վերանվանվելով Խորեն, ուխտելով սրբությամբ և բոլորանվեր հավատքով ծառայելու Աստծուն և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն[15]: Նորընծա աբեղան իր հոգևոր-հասարակական գործունեությունը սկսում է Նոր Բայազետի և շրջակայքի եկեղեցիների բարեկարգչի պաշտոնից:

1902 թ. մարտի 24-ին Ս. Գայանե վանքում Մայր տաճարի լուսաբարապետ Ղևոնդ եպիսկոպոսի կողմից նրան շնորհվում է վարդապետական չորս աստիճաններ և գավազան կրելու իրավունք[16]: Այս շրջանում երիտասարդ Խորեն վարդապետի ծավալած եկեղեցաշեն գործունեության արդյունք են այսօր էլ Վարդենիսում գործող Ս. Աստվածածին (1903) և Նոր Բայազետի համանուն եկեղեցիների կառուցումը[17]: 1903 թ. հունիսի

---

[8] **Մ. Հ. Սանթրոսյան,** Ներսիսյան Դպրոցի Պատմություն,. Երևան, 1981 թ., էջ 165:
[9] Ինքնակենսագրական, Գերագույն Հոգևոր Խորհուրդ, ֆ. 409, ց. 1, գ. 132:
[10] «Հայ խօսնակ», Կ. Պոլիս, 1938, մայիս, էջ 2:
[11] «Սիոն», Երուսաղեմ, 1932 թ. դեկտեմբեր, էջ 374:
[12] **Մ. Հ. Սանթրոսյան,** Ներսիսյան դպրոցի պատմություն, 1984 թ., Երևան, էջ 165:
[13] Ֆ. 57, ց. 2, գ. 1675, թ. 1:
[14] Նույն տեղը:
[15] Նույն տեղը, թ. 2:
[16] Նույն տեղը, թ. 3:
[17] Երևանի Հայոց թեմական Վարչություն, ֆ. 48, ց. 1, գ. 641, թ. 7:

12-ին Կովկասի փոխարքա Գոլիցինի կողմից իրականացվում է ռուսաց Նիկոլայ Երկրորդ ցարի ստոր հրամանագիրը՝ Հայ Եկեղեցու և հոգևոր հաստատությունների ունեցվածքը ցարական կառավարության տնօրինությանը հանձնելու թալանչիական որոշման գործադրումը: Այդ արբապիղծ որոշման դեմ չհամակերպվելով, Խորեն Հայր Սուրբը, իբրև անհնազանդ, ցարական կառավարության կարգադրությամբ աքսորվում է Ռուսաստանի Օրյոլ քաղաք, որտեղից վերադառնում է 1905 թ. ապրիլին[18]:

Նույն թվականի օգոստոսի 8-ին թիվ 665 կոնդակով Խորեն վարդապետին վստահվում է Գորու-Իմերեթի-Բաթումի և Արդվինի առաջնորդական փոխանորդի պաշտոնը[19]: 1907 թ. Խրիմյան Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ վերադառնում է Մայր Աթոռ՝ ստանձնելու դիվանապետի պաշտոնը, սակայն հենց այդ ժամանակ Նոր Բայազետի հայությունը իր «բազմաղերսագիր» հեռագրով դիմում է Հայրապետին՝ խնդրելով Նոր Բայազետ ուղարկել իրենց սիրելի Խորեն Հայր Սուրբին[20] Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով նրանց և հայր սուրբի ցանկություններին, 1487 թվակիր կոնդակով հունիսի 24-ին նրան նշանակում է Նոր Բայազետի և Դարաչիչագի եկեղեցիների բարեկարգչի և գործակալի պաշտոնում[21], մինչև 1909 թ. սեպտեմբերի 14-ը: Նույն թվականի դեկտեմբերի 13-ին Մատթեոս Կաթողիկոսի միջնորդությամբ ցարական կառավարությունը հաստատում է Երևանի թեմական պատգամավորական ժողովի կողմից իբրև փոխառաջնորդ ընտրված Խորեն վարդապետի նոր պաշտոնը[22]: 1910 թ. Երևանի թեմի պատգամավորական ժողովը հայտագիր դիմումով միջնորդում է Մատթեոս Կաթողիկոսին՝ եպիսկոպոսության աստիճան շնորհելու Խորեն վարդապետին: Նույն թվականի սեպտեմբերի 19-ին, Վարագա խաչի Բուն Բարեկենդանի կիրակի օրը, ձեռամբ Մատթեոս Բ Հայրապետի, ձեռնադրվում է եպիսկոպոս՝ օծակից ունենալով Մեծի Տանն Կիլիկիո Տ. Բաբկեն ապագա աթոռակից Կաթողիկոսին, Երուսաղեմի Տ. Թորգոմ և Կ. Պոլսի Տ. Զավեն Պատրիարքներին:

1910 թ. դեկտեմբերի 11-ին վախճանվում է Մատթեոս Բ Կաթողիկոսը: Եվ դեռ այդ ժամանակ, իբրև արժանավոր թեկնածու հայրապետական գահին, մամուլում հիշվում է երիտասարդ՝ 37-ամյա Խորեն արբազանի անունը, Եղիշե Պատրիարքի հետ միասին: Իսկ Երևանի թեմը իր մեկ միլիոն հայությամբ և մոտ 100 պատգամավորական ձվիրակներով գաղտնի քվեարկությամբ Խորեն արբազանին առաջադրում է կաթողիկոսության թեկնածու: Այս ամենը կատարվում է հակառակ իր ցանկության և գործելակերպի, երբ ինքը կազմել է քսան անուն մի ցանկ և առաջարկում էր համաձայնության գալ և ընտրել առավել արժանավորին[23]:

1914 թ. օգոստոսի 1-ին բռնկված առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Խորեն եպիսկոպոսը եղբայրական օգնության կոմիտեի անդամների՝ Հ. Թումանյանի և Ալ. Շիրվանզադեի հետ մի քանի անգամ լինում է Կովկասյան ռազմաճակատում, կազմակերպելով հայ գրականու-

---

[18] Ֆ. 409, ց. 1, գ. 132, թ. 14:
[19] Նույն տեղը:
[20] Նույն տեղը:
[21] Ֆ. 57, ց. 2, գ. 1697, թ. 1:
[22] Ֆ. 409, ց. 1, գ. 132, թ. 14:
[23] Ֆ. 409, ց. 1, գ. 132, թ. 15:

թյան օգնության գործը[24]: Խորեն սրբազանի փոխառաջնորդության շրջանի հոգևոր գործունեության արդյունք են որոշ շինությունների ծրագրեր՝ Ալափարսի Ս. Վարդան եկեղեցին 1913 թ.[25], Ալեքսանդրապոլի գավառի Ղազարապատ գյուղի աղոթատան վերակառուցումը[26], նույն գավառի Մեծ Քեյթի գյուղի եկեղեցու կառուցումը[27], Արտաշատի շրջանի Մրգավան գյուղի Ս. Հակոբ եկեղեցու օծումը[28], Օշականում նոր դպրոցի հիմնարկեքի օրհնությունը[29]:

1917 թ. Երևանում կազմվում է Երևանի Ազգային Խորհուրդ, որը նախագահում է ինքը՝ Խորեն եպիսկոպոսը: Այս խորհուրդն է ղեկավարում երկիրը մինչև 1918 թ. օգոստոսի 1-ը[30]:

1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսում Հայ Հեղափոխական դաշնակցության գլխավորած Հայոց Ազգային Խորհուրդը Հայաստանը հռչակում է անկախ հանրապետություն: Հուլիսի սկզբին Թիֆլիսում կազմվում է Հայաստանի կառավարությունը Հովհաննես Քաջազնունու գլխավորությամբ: Հուլիսի 17-ին Հայաստան է տեղափոխվում Հայոց Ազգային Խորհուրդը և կառավարությունը: Նույն օրը, երեկոյան, Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը, իբրև Երևանի Ազգային Խորհրդի նախագահ, Քաջազնունուն է հանձնում իշխանությունը և ինքն անցնում առաջնորդական իր պաշտոնին[31]: 1919 թ. Խորեն Մուրադբեկյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ի կարգադրությամբ և կառավարության հրահանգով, մեկնում է Փարիզ՝ համերաշխություն հաստատելու Փարիզի խաղաղության կոնֆերանսին մասնակցող հայկական երկու պատվիրակությունների միջև[32]: 1920 թ. Փարիզից անցնում է Ամերիկա՝ կարգավորելու կուսակցական պայքարի հետևանքով պառակտված թեմական կյանքը[33]:

Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրերին վերադառնում է հայրենիք, շարունակում իր հայրենանվեր գործունեությունը հօգուտ վերաշինվող երկրի: 1920 թ. դեկտեմբերի 11-ին 739 թվակիր կոնդակով Գևորգ Ե Կաթողիկոսը, բարձր գնահատելով նրա վաստակը Հայ Եկեղեցու կյանքում, Խորեն եպիսկոպոսին շնորհում է արքության պատիվ:

1920 թ. նոյեմբերի 29-ին, Խորհրդային կարգերի հաստատումով, Հայ Եկեղեցու համար ստեղծվում են անսպասելի դժվարագույն պայմաններ: Նոր իշխանությունների հետ հարաբերությունները ճշտելու և դրանք գործնական հողի վրա դնելու նպատակով 1921 թվականից Գևորգ Ե Կաթողիկոսը, կառավարության հետ բանակցություններ վարելու համար, Խորեն արքեպիսկոպոսին նշանակում է Հայաստանի լիազոր ներկայացուցչի բարդ ու պատասխանատու պաշտոնում՝ նրան հանձնարարելով վանքի կազմակերպչական, ներկայացուցչական, իրավական շատ ու շատ հարցեր[34]: Եկեղեցու

---

[24] «Արարատ», 1915 թ. փետրվար-մարտ, էջ 138:
[25] Ֆ. 48, ց. 7, գ. 641, թ. 3:
[26] Նույն տեղը, թ. 2:
[27] «Արարատ», 1914 թ. հունիս, էջ 488:
[28] Նույն տեղը:
[29] Այս տվյալը մեզ է հաղորդել տեղի քահանա Տ. Թադեոս Ավագյանը:
[30] Ֆ. 409, ց. 1, գ. 132, թ. 14:
[31] Ֆ. նույն տեղը, թ. 15:
[32] Ֆ. 57, ց. 5, գ. 222, թ. 2:
[33] Ֆ. 409, ց. 1, գ. 132, թ. 15:
[34] Ֆ. 409, նույն տեղը, թ. 16:

նկատմամբ տարվող Խորհրդային իշխանության անհանդուրժող քաղաքականությունը և Եկեղեցու գլխին կուտակված փոթորկալից ամպերն ու դաժան պայմանները ստիպում են Հայոց վշտաբեկ Հայրապետին Հայ Եկեղեցու վարչական և կազմակերպչական գործերի տնօրինությունը հանձնել միաբանական ժողովում Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ ընտրված Խորեն արքեպս. Մուրադբեկյանին[35]: 1923 թ. մարտի 4-ին Գևորգ Ե Կաթողիկոսը վավերացնում է նրա ընտրությունը և միաժամանակ նշանակում նաև նախագահող Գերագույն Հոգևոր Խորհրդի[36]:

1924 թ. մայիսի 27-ին բազմազբաղ Խորեն Սրբազանը, համաձայն իր դիմումի, ազատվում է Արարատյան թեմի փոխառաջնորդի պաշտոնից[37], մշտապես վերադառնում Էջմիածին՝ զբաղեցնելով ԳՀԽ-ի նախագահող անդամի և Մայր տաճարի լուսարարապետի պաշտոնները: Երևանի փոխառաջնորդության պաշտոնը նա վարեց շուրջ տասնհինգ տարի: Բոլոր կարևոր խորհրդակցությունների ժամանակ սրբազանը անխտիր հրավիրվել է Էջմիածին և առհասարակ անմիջական մասնակցություն ունեցել Մայր Աթոռի գործերին թե՛ Մատթեոս Իզմիրլյան և թե՛ հատկապես Գևորգ Ե Կաթողիկոսների ժամանակ: Նրանք երկուսն էլ առանձին բարեհաճ վերաբերմունք են ունեցել Խորեն Սրբազանի նկատմամբ՝ գնահատելով նրա՝ դեպի Մայր Աթոռն ունեցած հավատարմությունը և հանդեպ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը տածած որդիական ակնածանքն ու ջերմ սերը: Խորեն արքեպիսկոպոսը, իբրև նախագահող անդամ ԳՀԽ-ի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ, բազմաթիվ դիմումներ է հղել Խորհրդային Միության և Հայաստանի ժողկոմխորհի նախագահներին՝ պահանջելով, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ԳՀԽ-ը պետության կողմից ճանաչվեն իբրև իրավական անձ, Մայր Աթոռին տրվի Հոգևոր ճեմարանի վերաբացման իրավունք, ստանալ մասնավոր սեփականության թույլտվություն, վերադարձվեն Եկեղեցուց բռնագրավված կալվածներն ու շենքերը, վերջ տրվեն Եկեղեցու հալածանքներին, Եկեղեցու պաշտոնյաների դեմ գործադրված բռնություններին, անօրինականություններին ու անպատվություններին:

1924 թ. մի քանի եկեղեցականներ, վայելելով պետության բացահայտ հովանավորությունը, հիմնում են Հայ Եկեղեցու նվիրապետությունը չհարգող «Ազատ եկեղեցական եղբայրություն» խմբակը: Սրանք իրենց կեղծ բարեփոխումներով փորձում են առաջ բերել Հայ Եկեղեցու կազմալուծումը: Խորեն արքեպիսկոպոսը, բազմաթիվ շրջաբերականներով ու նամակներով դատապարտելով նրանց սխալ ընթացքը, դիմում է հավատացյալ հայ ժողովրդի զավակներին՝ հեռու մնալ ազատականների պառակտիչ և մոլորեցնող գործողություններից:

1930 թ. մայիսի 8-ին, 83 տարեկան հասակում, վախճանվում է Գևորգ Ե վշտալի Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայրապետի վերջին Օծման և թաղման սգահանդես արարողություններից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ Խորեն արքեպս. Մուրադբեկյանը ստանձնում է իր պաշտոնի կատարումը՝ պարտքի և պատասխանատվության խոր գիտակցությամբ, պաշտոն, որ նա վարեց շուրջ երկու և կես տարի ամենայն նվիրվածությամբ և բարեխղճությամբ, մինչև 1932 թ. նոյեմբերի 12-ը: Խորեն

---

[35] Նույն տեղը:

[36] Ֆ. 57, ց. 3, գ. 518, թ. 1:

[37] Ֆ. 57, ց. 2, գ. 521, թ. 293:

արքեպիսկոպոսի տեղակալության շրջանի մասին գնահատականով է արտահայտվել Կիլիկյան Աթոռի Տ. Բաբկեն Ա աթոռակից Կաթողիկոսը՝ նշելով, որ նա «իր տեղակալի պաշտոնը կատարեց ձեռնհասորեն ու վայելչությամբ»[38]:

1932 թ. նոյեմբեր 12-ին, երկար սպասումներից հետո, առաջին անգամ, 1836 թ., Պոլոժենիայից հետո ժողովրդական ընտրությամբ ազգն ընտրում է իր հոգևոր պետին: Ամենայն Հայոց Կաթողիկոս է ընտրվում Խորեն արքեպս. Մուրադբեկյանը: Հաջորդ օրը Ս. Էջմիածնի Մայր տաճարում հանդիսավոր կերպով 12 եպիսկոպոսների կողմից կատարվում է ձեռնադրության կարգը՝ Հայրապետական Օծում ստանալով ավագագույն Մեսրոպ արքեպիսկոպոսից:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու ընդհանրական Հայրապետության համար տնտեսական, հոգևոր-բարոյական ծանր պայմաններում է Կաթողիկոսական գահ բարձրանում Ամենայն Հայոց ազգընտիր Խորեն Ա Վեհափառ Հայրապետը: Վեհափառ Հայրապետի Կաթողիկոսական գահ բարձրանալուց հետո առաջին մտահոգություններից էր Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից անապահով ճանաչված Մայր Աթոռի տնտեսական կացության բարելավումը: Սփյուռքում Ազգային-Եկեղեցական շրջանակներում տիրող անկայուն վիճակը շատ թեմերի խառնակ և անկազմակերպ կյանքը Հայոց Հայրապետին ստիպում են 1934 թ. Սփյուռքում վերահաստատելու Հայրապետական նվիրակի պաշտոնը: Այդ պաշտոնում իբրև լիազոր ներկայացուցիչ նշանակում է Գարեգին արքեպս. Հովսեփյանին[39]:

Խորեն Ա Կաթողիկոսը արտասահման ուղարկվող Գարեգին արքեպիսկոպոսին պարտականություններ է տալիս.

1. Կազմակերպել և խաղաղություն հաստատել Սփյուռքի մի շարք թեմերում:

2. Մայր տաճարի վերանորոգության համար համազգային հանգանակություն կազմակերպել:

3. Մայր Աթոռի հոգևոր-մշակութային ձեռնարկների (ճեմարանի բացման, պաշտոնաթերթի հրատարակման) և միաբանության տնտեսական ապահովության համար միջոցներ հայթայթել, հաստատել «Լուսավորչի լումա» կամավոր նվիրատվությունը:

4. Ամրապնդել սփյուռքահայության և նվիրապետական Աթոռների կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

Խորեն Ա Կաթողիկոսի հայրապետական գործունեության փառավոր էջերից է Աստվածաշնչի թարգմանության 1500-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումների կազմակերպումը Սփյուռքում համազգային խանդավառության պայմաններում: Մեծ է Խորեն Ա Կաթողիկոսի հայրենասիրական գործունեությունը: Նորին Սրբությունը, հակառակ կառավարության կողմից Եկեղեցու դեմ հարուցած բազում արգելքներին ու սահմանափակումներին, բազմաթիվ կոնդակներով, շրջաբերականներով սփյուռքահայությանը տեղյակ է պահում հայրենի կառավարության շինարարական ձեռնարկումների մասին՝ հորդորելով արտասահմանի բոլոր հայ կազմակերպություններին և անհատներին օժանդակություն ցուցաբերելու հայրենաշինության գործին: Խորեն Ա Կաթողիկոսի հայրապետական բազմաբնույթ

---

[38] «Հասկ», 1932 թ., էջ 51:

[39] Ֆ. 409, ց. 1, գ. 1619, թ. 10:

գործունեությունից անբաժան է նաև Մայր Աթոռի և կրոնական հաստատությունների իրավունքների պաշտպանության համար ի գործ դրված նրա բոլոր ջանքերը: Խորեն Ա Կաթողիկոսի օրոք մեծ ուշադրություն դարձվեց նաև թեմերի, թեմական կազմակերպությունների ամրապնդման և նոր թեմերի կազմության վրա: Վեհափառ Հայրապետի 1936 թ. մայիսի 30-ի 725 թվակիր սրբատառ կոնդակով հաստատում է Հարավային Ֆրանսիայի թեմը Մարսել կենտրոնով: 1937 թ. հուլիսի 24-ին Հայրապետական տնօրինությամբ կազմվում է Հարավային Ամերիկայի թեմը, իր իշխանությանը ենթարկելով Բուենոս Այրեսի, Սան-Պաուլոյի, Կորդոբայի և Մոնտեվիդեոյի հայությանը[40]:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներից ի վեր օրակարգի հարց դարձավ Հայ Եկեղեցու բարեկարգումը՝ ճշտելու համար Եկեղեցու դիրքը նոր իրավակարգի պայմաններում: Նորընտիր Խորեն Ա Կաթողիկոսը իր անդրանիկ կոնդակում անդրադարձավ հիշյալ խնդրին. «...բարեկարգել և նրոգել զհնացեալ սովորութիւնս ի կարգս որք կարոտին սրբագրութիւն ըստ պահանջից և կարեաց նորու ժամանակի»:

Հայ Եկեղեցու բոլոր նվիրապետական Աթոռների ու թեմերի մասնակցությամբ Ազգային-Եկեղեցական ժողով հրավիրելու հնարավորությունից զրկված Խորեն Ա Կաթողիկոսը 1937 թ. օգոստոսի 1-ին գրում է բարեփոխության մասին հմր. 417 սրբատառ կոնդակը: Սակայն Հայ Եկեղեցին բարեկարգ վիճակի մեջ տեսնելու և Ազգային-Եկեղեցական շատ ու շատ ծրագրեր կյանքի կոչելու Խորեն Ա Կաթողիկոսի փափագը անկատար մնաց դաժան պայմանների պատճառով:

Խորեն Ա Կաթողիկոսի օրոք եղբայրական սիրալիր ջերմ հարաբերություններ էին պահպանվում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ընդհանրական Հայրապետության և Հայ Եկեղեցու նվիրապետության մյուս Աթոռների միջև: Նրա կյանքի վերջին տարիների գործունեության կարևորագույն արդյունքն այն է, որ կարողացավ, այնուամենայնիվ, աշխարհասփյուռ հայության ալեկոծ նավը և բոլոր նվիրապետական Աթոռները Ս. Էջմիածնի ու Մայր Հայրենիքի հետ ամուր շաղկապված պահել: Նորին Սրբություն Խորեն Ա Կաթողիկոսի անթաքույց սերն ու բացառիկ վերաբերմունքը հանդեպ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունն ու Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքությունները բացահայտվում են ոչ միայն հայրապետական գործունեության ուրվագիծը տվող անդրանիկ կոնդակի, այլև պաշտոնական բազմաթիվ գրություններում:

Խորեն Ա Կաթողիկոսի հարգանքն ու սերը հանդեպ նվիրապետական Աթոռները նկատելի են դեռևս իր եպիսկոպոսության շրջանի գործունեությունից՝ իբրև տեղակալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և նախագահող ԳՀԽ-ի: Խորեն Ա Հայրապետի հարգանքն ու սերը հանդեպ Կիլիկյան Աթոռը դրսևորվել է հատկապես աստանդական Աթոռի թեմերի կազմակերպության հարցում Մերձավոր Արևելյան երկրներում:

1939 թ. ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը, իր Հայրապետական գործունեության 6-րդ տարին չբոլորած, կյանքի 65-րդ տարում, բազում տառապանքներից ու վշտերից խոցված, Հայոց բազմաչարչար Հայրապետը ողբերգական պայմանների մեջ հավետ փակում է իր աչքերը: Նահատակված Հայրապետը իր հոգին ավանդեց անհայտության մեջ, առանց վերջին խոսք

[40] Ֆ. 409, ց. 1, գ. 5514, թ. 1, 2:

ասելու և առանց կտակ թողնելու: Երջանկահիշատակ Խորեն Ա. Կաթողիկոսի առեղծվածային մահվան մանրամասնություններին անդրադարձել են ափյուռքահայ մտավորական Թորգոմ Վեհապետյանը՝ «Իրաւ Հոգևորականը» գրքում, և Պարգև Գևորգյանը (նախկին եպիսկոպոս)՝ «Հայրենի եզերք» ամսագրում: Ըստ Թորգոմ Վեհապետյանի, Խորեն Ա. Կաթողիկոսը վախճանվել է 1938 թ. ապրիլի 10-ի լույս 11-ի գիշերը, որը ճիշտ չէ: Նրա հաղորդած տվյալների համաձայն, հոգելույս Խորեն Ա. Վեհափառի մահը տեղի է ունեցել էլեկտրական հոսանքի բարձր լարման ազդեցության տակ: Իսկ երկրորդ հեղինակի վկայությամբ, Հայրապետին խեղդամահ են արել: Կան նաև ժողովրդի մեջ տարածված այլ զրույցներ:

Մենք կբավարարվենք միայն Գերագույն Հոգևոր Խորհրդի պաշտոնական հաղորդագրություններով՝ ուղղված նվիրապետական Աթոռներին և թեմերին, նաև, թե Կաթողիկոսի մահվան լուրը ի՞նչ արձագանք է գտել Սփյուռքում: Անշուշտ, հույս ունենք, որ հետագայում ՊԱԿ-ի արխիվների բացումով նորահայտ փաստաթղթերի հիման վրա կբացահայտվեն Կաթողիկոսի մահվան անհայտ էջերը: Մեզ չհաջողվեց գտնել մահվան վերաբերյալ կազմված և ստորագրված պաշտոնական որևէ արձանագրություն կամ զեկուցագիր: Միայն Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Արսեն արքեպիսկոպոս Ղլտճյանը ապրիլի 6-ին հետևյալ գրությամբ Հայրապետի մահվան մասին տեղեկացնում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին. «Տարվույս 5-ի լույս 6-ի գիշերը իր մահկանացուն կնքեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տեր Խորեն Առաջինը: Հանգուցյալը վերջին 10 օրվա ընթացքում նամանավանդ գանգատվում էր իր սրտի անկանոն գործունեությունից, սակայն միշտ հրաժարվեց բժշկական օգնության դիմել և մեզ հանգստացնում էր. «Թե ցավերն անցողական են, քանի որ այլ անգամներ էլ է պատահել»: Բժշկական քննությունը ցույց տվեց, որ հանգուցյալի մահը առաջացել է սրտի կաթվածից, այս բանն ապացուցեց դիազննությունը մասնագետ բժիշկների կողմից, որոնք և կազմեցին պատշաճ արձանագրություն Կաթողիկոսի մահվան այդ պատճառի մասին:

Դիազննությանը ես անձամբ ներկայացա իբրև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ»[41]:

Խորեն Ա. Կաթողիկոսի թաղման և հուղարկավորության մասին երկրորդ զեկուցման մեջ Արսեն արքեպիսկոպոսը գրում է. «Ամսույն 6-ին հանգուցյալ Հայրապետի դիազննությունից հետո արի հետևյալ կարգադրությունները.

1. Շտապ հեռագրեցի Տ. Գևորգ արքեպիսկոպոսին վերադառնալ Մայր Աթոռ:

2. Հարկավորը տնօրինեցի հոգելույս Հայրապետի թաղման մասին, երբ տեսա թաղումն դանդաղելն անտեղի է, Տ. Խորեն Կաթողիկոսի մահն հաղորդվեց ավանդական երրորդը՝ հնչեցնելով, ապա հրավիրվեցին միաբան եղբայրները վեհարան, ուր նրանց հաղորդվեց Հայրապետի մահը: Դագաղի և թաղման այլ պարագաների առթիվ կարգադրություններ անելուց հետո նույն օրվա երեկոյան կատարվեց հոգեհանգստյան պաշտոն: Դագաղին հազիվ գիշերվա ժամը 10-ին մոտ հասնելու պատճառով հուղարկավորությունը կատարվեց հետևյալ օրը՝ ապրիլի 7-ին, վեհարանից դեպի Գայանե վանքը, որի գավթումն էլ Սուրբ Պատարագից և եկեղեցական

[41] Ֆ. 409, ց. 1, գ. 1204, թ. 1:

պատշաճ քարոզխոսությունից հետո հավատացյալների ստվար բազմության ներկայությամբ կատարվեց ամփոփումը հանգուցյալ Հայրապետի»[42]:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Արսեն արքեպիսկոպոսի ապրիլի 17-ի մեկ ուրիշ հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ ապրիլի 6-ին պետական պաշտոնական անձանց հետ Կաթողիկոսի սենյակը բաց անելուց հետո գտնվում է մեկ կոնդակ՝ թվագրված ապրիլ 16 1936 թ. թիվ 620 հանում Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի, որով նա նշանակվում էր տեղակալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի[43]: Հարց է առաջանում, թե որտեղի՞ց այդ պահին վեհարանում հայտնվեցին «պետական պաշտոնական անձինք»: Ինչո՞ւ այդքան ուշ և ամեն ինչ վերջացնելուց հետո միաբաններին տեղյակ պահվեց և միայն այլ անձանց հետ Արսեն արքեպիսկոպոսն էր մասնակցում, որը ըստ բազմաթիվ փաստաթղթերի, ընդհարված էր ողջ միաբանության ու Կաթողիկոսի հետ:

Գերագույն Հոգևոր Խորհրդի զեկուցման համաձայն ինչո՞ւ էր Կաթողիկոսի հուղարկավորության և թաղման կարգը հետաձգելն անտեղի: Ինչո՞ւ թաղումը պետք է կատարվեր հաջորդ օրը, եթե նույնիսկ դագաղը չուշացվեր, թաղումը կկատարվեր նույն՝ մահվան օրը, երբ ավանդական կարգի համաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի թաղումը տեղի է ունենում վախճանումից 10 օր հետո միայն, երբ հանգուցյալ Հայրապետի վերջին օծման, հուղարկավորության և թաղման արարողությունները նախագահելու համար Մայր Աթոռ չէր ժամանել Կաթողիկոսական տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը: Երբ Մայր Աթոռում չէին հավաքվել թեմական առաջնորդները և կառավարության օրգան «Խորհրդային Հայաստան» թերթը որևէ տող չէր գրել և երբեք չգրեց այդ մասին: Վեհափառ Հայրապետի թաղման այսքան հապշտապ կազմակերպումից պետք է ենթադրել, որ անբնական և ողբերգական մահ է ունեցել Ամենայն Հայոց Խորեն Ա Կաթողիկոսը: Խորհրդավոր պայմաններում կատարված նրա մահը փորձել են թաքցնել կամ վախեցել են հետագա բարդություններից: Թորգոմ Վեհապետյանի վկայությամբ, Կաթողիկոսի անիմանալի սպանությունը թաքցնելու նպատակով զինվորականները, մահվան հենց հաջորդ օրը, փորձում են Վեհափառի դին ինչ-որ անհայտ տեղում մարդկանցից գաղտնորեն թաղել:

Խորեն Ա Կաթողիկոսի վաղաժամ մահը մեծ վիշտ ու ցավ պատճառեց համայն հայությանը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: 1938 թ. «Հասկ» ամսագրի մայիս ամսի համարի 66-րդ էջում «Հայրապետ Սուրբ և Անքիծ» խորագրի տակ կարդում ենք սրտառուչ այս տողերը. «Շանթահարիչ էր ապրիլ 11 թվակիր Երուսաղեմի Ամենապատիվ Ս. Պատրիարքիս հեռագիրը, որով կգուժեր Ընդհանրական Հայրապետի, Տ. Տ. Խորեն Ա. Ս. Կաթողիկոսի դառնաղետ մահը՝ սրտի կաթվածի հետևանքով: Խիստ վշտալի և հուզիչ էր այն վայրկյանը, երբ Նորին Ս. Օծություն Տ. Սահակ Կաթողիկոսը լսեց Ընդհանրական Հայրապետին մահվան բոթը. քանի մը վայրկյան լուռ մնաց ան, գլուխը կախ և աչքերը փակ և ի վերջո, կարծես հարվածին պատճառած թմրութենեն ուշաբերելով, ըսավ. «Ես պատրաստ էի փոխան անոր մեռնելու, Եկեղեցին Անոր պետք ուներ, տակավին երիտասարդ էր բաղդատմամբ իմ տարիքիս, Հայ ժողովուրդը շատ բան կսպասեր Անոր բազմապիսի կարողություններեն. յուր հանկարծական մեկնումով ի խոր խոցեց արդեն խոցոտյալ սիրտս, երեսուն վեց տարեկան կաթողիկոսության

[42] Ֆ. 409, ց. 1, գ. 1204, թ. 2:
[43] Ֆ. 409, ց. 1, գ. 1204, թ. 3:

ընթացքին ողբացի ինձ լծակից պատվական Հայրապետներեն Խրիմյան, Իզմիրլյան, Սուրենյան, Կյուլեսերյան և անա ի լրումն դժբախտությանց Մուրադբեկյան...»:

Խորեն Ա. Հայրապետի աճյունը Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ Գևորգ Չորեքչյանի կարգադրությամբ 1941 թ. տեղափոխվում և թաղվում է Գայանե եկեղեցու կենտրոնական մուտքի հյուսիսային կողմում: Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետի գահակալության ընթացքում պատշաճ շիրմաքար դրվեց հանգուցյալ Հայրապետի գերեզմանին: Երջանկահիշատակ Հայրապետը ամբողջ 38 տարի անխորտակելի կամքով ու անսպառ եռանդով ծառայեց իր ազգին ու Եկեղեցուն՝ դառնալով նրա ականավոր դեմքերից մեկը իր մանկավարժական, հովվական, հասարակական, վանական, վարչական ու Կաթողիկոսական եռանդուն ու անձնվեր գործունեությամբ, հոգելից կյանքի լուսավոր հետքեր թողնելով գալիք սերունդներին: Նա իր բոլոր կոչումներում ու գործունեության ասպարեզներում՝ սկսած սարկավագությունից մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոս, միշտ վեր բարձրացավ և աշխատանքային տաղանդով ու եռանդուն նվիրվածությամբ արդյունավորեց ամենուրեք: Ծանր ու աննախադեպ մի ժամանակաշրջան սկսվեց Հայ Եկեղեցու համար նահատակ Քահանայապետի գահակալության տարիներին, նրա գործունեությունը համընկավ անհատի պաշտամունքի ավերիչ ժամանակաշրջանին, երբ մոլեգնում էր անաբեկչությունն ու սարսափը: Նրա Հայրապետության վեց տարիները իսկական տառապանքի ու հակամարտության մի աներևակայելի ժամանակաշրջան եղան, որովհետև Հայոց իշխանությունները ևս թշնամաբար էին տրամադրված դեպի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին և ամեն կերպ ձգտում էին իրավազրկել ու արգելափակել նրա գործունեության շրջանակները: Նա ամեն կողմից դժվարությունների ու արգելքների հանդիպեց, հալածանքներ ու զրկանքներ տեսավ: Տեսավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների բանտարկությունները ու նրանցից շատերի ֆիզիկական ոչնչացումը: Եվ այդ բոլորը թեև ծանրորեն խոցեցին նրա վիրավոր սիրտը, բայց նա հակառակ այդ ամենի տոկաց, արիական անսասան կամք դրսևորելով իր աղոթքը վերառաքեց առ Աստված. «Նայեայ ի մեզ և ողորմեայ Քրիստոս, որ ունիս բազում գթություն»:

Մեր համեստ պրպտումների և ուսումնասիրությունների ընթացքում մենք խորապես համոզվեցինք, որ ոչ մի մոլեգին փոթորիկ ու ոչ մի խելագար ուժ չկարողացավ տկարացնել նրա հավատքը Ս. Լուսավորչի լուսե երազի՝ Ս. Էջմիածնի հավիտենական գոյության ու Հայ Եկեղեցու պայծառ ապագայի հանդեպ:

Խորեն Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսը Հայ Եկեղեցու Ս. Սեղանին դրեց իր հրավառ Սիրտը, որ այրվելով դարձավ մի անշեջ կանթեղ: Եվ մենք Հայ Եկեղեցու այսօրվա սպասավորներս, պարտավոր ենք զգացումով ու խորին երախտագիտությամբ հիշելու նրա գործն ու անունը, որը ճշմարիտ ժառանգորդն ու հաջորդը դարձավ Հայ Եկեղեցու այն մեծ ու պայծառ գահակալների, որոնք մահկանացու ճնշալ՝ անմահ հիշատակ թողեցին:

Ստորև ներկայացնում ենք մի ձեռագիր աշխատություն («Ունենք մենք հոգի»)՝ գրված Խորեն Ա Մուրադբեկյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, որը հրատարակության պատրաստեց տողերիս հեղինակը:

ՎԱՐՈՒԺԱՆ ՍՐԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆ